ՀՀ գիտության կոմիտեի նախագահի ողջույնի խոսքը
«Կոմիտաս–150» գիտական նստաշրջանի բացման ժամանակ
(29.11.2019, Երևան, ՀՀ ԳԱԱ)

«ԿՈՄԻՏԱՍ 150» գիտական նստաշրջանի
հարգելի կազմակերպիչներ և մասնակիցներ, սիրելի հյուրեր

Թույլ տվեք ՀՀ գիտության կոմիտեի աշխատակազմի և անձամբ իմ անունից ողջունել ձեզ՝ «Կոմիտաս-150» հոբելյանական գիտական նստաշրջանի կազմակերպման և անցկացման առթիվ:

2019 թվականը նշանակալից է ոչ միայն հայ երաժշտության, այլև առհասարակ մեր ազգային մշակույթի համար. սեպտեմբերի 26-ին լրացավ Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանը: Եվ հատկանշական է, որ այդ լուսավոր տարեդարձը Հայաստանի գիտական հանրությունը նշանավորում է մեծ ու կարևոր միջոցառմամբ՝ ներկա գիտական նստաշրջանով: Այս առիթով ուզում եմ մեջբերել սրանից ուղիղ 50 տարի առաջ, 1969 թ. նոյեմբերի 17-ին ՀԽՍՀ ԳԱ կամարների ներքո ՀԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի, Հայաստանի կոմպոզիտորների միության և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գումարած գիտական միացյալ նստաշրջանում ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի հետևյալ խոսքերը՝ «Կոմիտասը հավաքեց հայ ժողովրդական երգերն ու մեղեդիները, մաքրեց դրանք անհարազատ նստվածքներից, մեծագույն վարպետությամբ մշակեց և այդպիսով ստացված շողշողուն, հղկված ադամանդի բյուրեղները վերադարձրեց ժողովրդին: Այդ անզուգական հարստությունը ընդմիշտ մտավ մեր մշակույթի գանձարանը՝ որպես նրա կարևորագույն մասը»:

Իսկապես անուրանալի է այն հսկայական դերը, որն ունեցավ Կոմիտասը հայ մշակույթի համար: Հայտնի է, որ նա իր ստեղծագործական կարճատև կյանքի ընթացքում ծավալեց բեղմնավոր ու արգասաբեր գործունեություն, որը մեծապես կանխորոշեց հայ երաժշտության զարգացման հետագա ուղիները: Միևնույն ժամանակ՝ հայ մշակույթում բացառիկ տեղ ու դեր ունի նաևԿոմիտասի կերպարը:

Նրան են անդրադարձել հայ կոմպոզիտորները, նկարիչներն ու քանդակագործները, բանաստեղծները:

Միանգամայն տրամաբանական է, որ գիտական նստաշրջանի կազմակերպիչներն են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Ինչպես խոստովանել է ինքը՝ Կոմիտասը, «Եթե բախտը ինձ չժպտար, և ես Սուրբ Էջմիածին և ապա իմ անգին բարերար պարոն Աղեքսանդր Մանթաշյանի միջոցով Գերմանիա չգնայի, կլինեի իմ հայրենիքում՝ Կուտինայում, շատ-շատ մի կոշկակար, որովհետև որբիս խնամող Հարություն հոր եղբայրս էլ կոշկակար էր»:

Մյուս կողմից՝ ծանրակշիռ է Արվեստի ինստիտուտի ներդրումը կոմիտասագիտության զարգացման գործում. մեծ երաժշտի ստեղծագործության ուսումնասիրությունը տասնամյակներ շարունակ, անկախ հոբելյաններից, գտնվել և գտնվում է ինստիտուտի երաժշտագետների գիտական հետաքրքրությունների կենտրոնում: Հենց ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի երաժշտագետների մի քանի սերունդների ջանքերով 1960-2006 թվականներին հրատարակվեց Կոմիտասի երկերի ակադեմիական ժողովածուն՝ 14 հատորով, և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվեց Կոմիտասի ողջ երաժշտական ժառանգությունը:

Ուրախալի է, որ գիտական նստաշրջանի աշխատանքներին մասնակցում են ոչ միայն Արվեստի ինստիտուտի, այլև ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Երևանի պետական համալսարանի գիտնականներն ու դասախոսները:

Ավարտելով խոսքս՝ գիտական նստաշրջանի մասնակիցներին մաղթում եմ արդյունավետ աշխատանք, գիտական նոր գաղափարներ ու եզրահանգումներ, մտքերի ակտիվ փոխանակություններ ու ստեղծագործական քննարկումներ:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ